

Կովկասում խաղաղության կոչ և աղոթք

Հռոմի Պապ Ֆրանցիսկոս

ՀՐԵՇՏԱԿԻ ՄԱՐԵՄՅԱՆ ԱՂՈՌՔ

Սուրբ Պետրոսի Հրապարակ

Կիրակի, 19 Յուլիս 2020թ.

«Միրելի քույրեր և եղբայրներ, այս ժամանակահատվածում, երբ համաճարակը նահանջի նշաններ ցույց չի տալիս, կուզենայի իմ զորակցությունը հայտնել նրանց, ովքեր դիմակայում են հիվանդությանը և դրա սոցիալ-տնտեսական հետևանքներին: Իմ միտքը հատկապես այն ժողովուրդների հետ է, որոնց տառապանքները բազմապատկվում է երկրում զինված հակամարտությունների հետևանքով: Հիմնվելով Միավորված Ազգերի Կազմակերպության Անվտանգության Խորհրդի վերջերս ընդունած բանաձևի վրա՝ վերահաստատում եմ ընդհանուր անհապաղ զինադադարի կոչը, որը հնարավորություն կտա անհրաժեշտ խաղաղության և անվտանգության պայմաններում մարդասիրական աջակցություն ցուցաբերել մարդկանց:

Մասնավորապես, մտահոգությամբ հետևում եմ վերջին օրերին Կովկասի տարածաշրջանում՝ Հայաստանի և Ադրբեյջանի միջև զինված հակամարտության սրացմանը: Աղոթում եմ տեղի ունեցած բախումների հետևանքով կյանքը կորցրած զինվորների և նրանց ընտանիքների համար: Լիափույս ունեմ, որ միջազգային հանրության միջնորդությամբ, կողմերի երկխոսության և բարի կամքի դրսևորմամբ հնարավոր կլինի հասնել խնդրի խաղաղ լուծմանը՝ ի բարօրություն երկու ժողովուրդների »: